

ՀՄՀ-Հայաստան Ծրագիր
Աշխատանքային Հանդիպում
Դեկտեմբերի 1-3, 2006 թ.
ք. Ծաղկաձոր, Կեչառիս համալիր

Աշխատանքային հանդիպման արդյունքների ամփոփում

<p>Ընդհանուր նկարագիր</p>	<p>Ս/թ դեկտեմբերի 1-3 թ. Ծաղկաձորում անցկացվեց աշխատանքային հանդիպում ՀՄՀ-Հայաստան ծրագրի աշխատակազմի և Շահառուների խորհրդի /ՇԽ/ անդամների մասնակցությամբ: Նախօրոք կազմված օրակարգը, մասնակիցների կազմը, ինչպես նաև հանդիպմանն առնչվող նյութերը տրամադրվել էին աշխատանքային հանդիպման բոլոր մասնակիցներին (կցվում են արձանագրությանը):</p>
<p>Հանդիպման հիմնական նպատակները.</p>	<ul style="list-style-type: none"> • կազմակերպել համատեղ աշխատանքային հանդիպում ՀՄՀ-Հայաստան ծրագրի աշխատակիցների և Շահառուների խորհրդի անդամների մասնակցությամբ. • ՇԽ-ին և ՀՄՀ-Հայաստան ծրագրի աշխատակազմին ներկայացնել ծրագրի ընդհանուր կառուցվածքը և մանրամասնել ենթածրագրերի հիմնական ուղղությունները և իրականացման մոտեցումները. • ՇԽ-ին հնարավորություն ընձեռել քննարկել ՊՈԱԿ-ի, ԶԼՄ-ների, հանրության հետ համագործակցելու մեխանիզմները. • հստակեցնել հետագա համատեղ աշխատանքների կազմակերպման և իրականացման ձևերը և մեխանիզմները:
<p>Հանդիպման հիմնական թեմաները.</p>	<ol style="list-style-type: none"> 1. Օր 1-ին՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի և ծրագրային բաղադրիչների ներկայացում և քննարկում. 2. Օր 2-րդ՝ Շահառուների խորհրդի գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերի քննարկում. 3. Օր 3-րդ՝ Աշխատանքների ամփոփում:

Հանդիպման առաջին օրվա աշխատանքների ամփոփում.

1. Ողջույնի խոսք

Ալեքս Ռասին, Հայաստանի ծրագրի տնօրեն, ՀՄԿ

Պարոն Ռասինը ողջունեց մասնակիցներին և համառոտ ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի նախապատմությունը, նպատակները, գործունեության ոլորտները և ակնկալվող արդյունքները:

Նա հույս հայտնեց առ այն, որ հանդիպումը կլինի արդյունավետ և կնպաստի ծրագրի հետագա ընթացքին և մասնակցային գործընթացների ակտիվացմանը:

2. ՀՄՀ Հայաստանյան ծրագրի ամփոփ ներկայացում

Արա Հովսեփյան, Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան

Ներկայացվեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրականացման գործընթացը, կառավարման համակարգը, ինչպես նաև ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառուցվածքը: Հստակեցվեցին ֆինանսական միջոցների տրամադրման կառուցվածքը, կառավարության աջակցության շրջանակները, ինչպես նաև խորհրդակցական գործընթացները և այլ ծրագրային հիմնախնդիրներ:

Մասնակիցների հարցեր և մեկնաբանություններ.

- Ծրագրի ադմինիստրատիվ ծախսերի չափի մասին:

3. Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի ներկայացում

Հակոբ Պետրոսյան, Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար, ՀՄՀ-Հայաստան

Ներկայացվեցին ոլորտի հիմնախնդիրները, Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի նպատակները և ցուցանիշները, ինչպես նաև իրականացման ժամանակացույցը և գործընթացը: Նախանշվեցին Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի կայունության ապահովման հիմնական բաղադրիչները:

Մասնակիցների հարցեր և մեկնաբանություններ.

- Ծանապարհային վերանորոգման աշխատանքների սկզբնական փուլերի և ընթացքի մասին հարցը.
- Շահառուների խորհրդի անդամներին Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի փաթեթների մանրամասն տվյալների տրամադրման առաջարկությունը:

4. Ոռոգելի գյուղատնտեսություն ենթածրագրի ոռոգման ենթակառուցվածքի գործունեության և կառուցվածքային ամրապնդում բաղադրիչի ներկայացում

Տիգրան Քալանթարյան, Ոռոգման ծրագրի ղեկավար, ՀՄՀ-Հայաստան

Տրվեց ոլորտի ինչպես ներկայիս նկարագիրը, այնպես էլ 90-ական թվականների իրավիճակը: Քննարկվեցին ոլորտին վերաբերող համընդհանուր բարեփոխումները, այդ թվում Ջրօգտագործողների ընկերությունների գործունեությանն առնչվող մի շարք դրույթներ՝ ներկայացնելով նրանց կազմակերպչական կառուցվածքը և կայացման ուղղությունները:

Այնուհետև, հակիրճ ներկայացվեցին ՀՄՀ Ռոռզման բաղադրիչի շրջանակներում սահմանված նպատակները և ակընկալվող արդյունքները: Հանգամանորեն քննարկվեցին Ռոռզման ենթակառուցվածքներ բաղադրիչի 20 տարածքային սխեմաներում նախատեսված աշխատանքները:

Մասնակիցների հարցեր և մեկնաբանություններ.

- ծրագրի շահառուների, այսինքն հասարակ գյուղացու համար ջրի մատչելիության հարցը,
- ջրօգտագործողների և ջուր մատակարարողների հարաբերակցությունների բարելավման կարգավորման վերաբերյալ խնդիրը,
- չարաշահումներից խուսափելու նպատակով՝ ջրամատակարարողներին էլեկտրաէներգիայի համար սուբսիդավորման քաղաքականության բարելավման հարցը,
- մեկ խորանարդ մետր ջրի սակագնի և Ջրօգտագործողների ընկերություններ կազմելու, ինչպես նաև ռոռզման ջրի որակի վերաբերյալ խնդիրները:

5. Ջրից դեպի շուկա գործունեության Անահիտ Պետրոսյան, Ջրից դեպի շուկա ներկայացում *ծրագրի ղեկավար, ՀՄՀ Հայաստան*

Ներկայացվեցին Ջրից դեպի շուկա բաղադրիչի հիմնական նպատակները, ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունները՝
Ս ներտնտեսային ջրի կառավարման նոր տեխնոլոգիաների կիրառում,
Ս անցում դեպի բարձրարժեք գյուղատնտեսական արտադրություն,
Ս հետբերքահավաքային տեխնոլոգիաներ, վերամշակում և մարքետինգ,
Ս վարկային կազմակերպությունների կարողությունների հզորացում և ծրագրի շահառուներին վարկերի տրամադրում:

Ներկայացվեցին նաև ծրագրի հիմնական թիրախները, մոնիտորիզի հիմնական ցուցանիշները, իրականացնող մարմինները և այլն:

Մասնակիցների հարցեր և մեկնաբանություններ.

- տրամադրվելիք վարկերի տոկոսադրույքներին վերաբերող հարցը.
- ծրագրի շրջանակներում վերապատրաստման ենթակա մասնակից ֆերմերների թվի հարցը.
- դասընթացներին ֆերմերների մասնակցության ապահովման հարցը.
- վերապատրաստման արդյունքում ստացված գիտելիքների ներդրման հարցը.
- վերադարձվելիք վարկերի գումարների հետագա օգտագործմանը վերաբերյալ հարցը.
- մարզերի բնակչության համար վարկային արտոնյալ պայմանների ստեղծման առաջարկությունը.
- Գեներալիորեն մոդիֆիկացված օրգանիզմների ներկրման վերահսկման համակարգերի ստեղծման առաջարկությունը.
- այլ կազմակերպությունների միջոցով (ոչ բանկեր) վարկերի տրամադրման առաջարկությունը.
- «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի առանձին քննարկում կազմակերպելու առաջարկությունը:

6. Գնումների գործընթացի ներկայացում

*Ալեքսանդր Բախտամյան, Գնումների
ղեկավար, ՀՄՀ-Հայաստան*

Ա. Բախտամյանը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի գնումների գործընթացի հիմնական սկզբունքները, ընթացակարգերը, պլանավորումը, ներգրավված կեղևներին, դրանց դերը: Հաստեցվեցին մրցութային հանձնաժողովների դերը, ինչպես նաև գնումների գործընթացի թափանցիկության և գաղտնիության ապահովման սկզբունքները:

Մասնակիցների հարցեր և մեկնաբանություններ.

- մրցութային գաղտնիք պարունակող ինֆորմացիային տիրապետելու Շահառուների խորհրդի բոլոր անդամների համար հավասար իրավունքների ապահովման հարցը.
- մրցույթի արդյունքները բողոքարկելու իրավունքների հարցը.
- կառավարման խորհրդի անդամների կողմից գաղտնի ինֆորմացիան չհրապարակելու հայտարարվող ստորագրելու առաջարկությունը:

**7. ՀՄՀ Հայաստանյան ծրագրի
Մոնիթորինգ և գնահատում.
Իրականացման մոտեցումներ**

*Էսթեր Հակոբյան, Մոնիթորինգի և
գնահատման ղեկավար, ՀՄՀ-Հայաստան*

Մոնիթորինգի և գնահատման գծով ղեկավար Էսթեր Հակոբյանը ներկայացրեց, թե ծրագրի շրջանակներում ինչպես են իրականացվելու մոնիթորինգի և գնահատման աշխատանքները: Առանձնացվեցին իրականացման երեք տարբերակներ.

- Կոշտության միջազգային ցուցանիշի և միջին օրական երթևեկության մոնիթորինգի հետ կապած խնդիրները:
- Ազգային Վիճակագրական Ծառայության (ԱՎԾ) կողմից անցկացվող Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության օգտագործումը ծրագրի շրջանակներում նպատակային ցուցանիշների մոնիթորինգ և ազդեցության գնահատում անցկացնելու նպատակով: Մանրամասնվեցին այնպիսի հարցեր, ինչպիսիք են ընտրանքի ընդլայնումը, հարցաթերթիկում լրացուցիչ հարցեր ընդգրկելը և լրացուցիչ աշխատակազմի ներգրավումը հետազոտմանը:
- Ջրից դեպի շուկա ենթածրագրի փորձարարական նախագծմանը և ազդեցության հետազոտությանն առնչվող հարցեր:
Ներկայացվեց նաև, թե ծրագրի ընթացքում այլ ինչ հետազոտություններ են օգտագործվելու ծրագրի ազդեցությունը գնահատելու համար:

Մասնակիցների հարցեր և մեկնաբանություններ.

- ԱՎԾ-ի կողմից իրականացվող հետազոտությունների արժանահավատության և ԱՎԾ-ն որպես ծրագրի ազդեցության գնահատման միջոց օգտագործելու նպատակահարմարության հարցը.
- տվյալների որակի այլընտրանքային գնահատում անցկացնելու և ՀՄՀ/ՀՄԿ-ի կողմից օգտագործվող մեթոդաբանության մատչելիության հարցը:

**8. ՀՄՀ Հայաստանյան ծրագրի
բնապահպանական և սոցիալական
հարցերի ներկայացում**

*Արմինե Մինոնյան, Բնապահպանության և
սոցիալական ազդեցության ղեկավար, ՀՄՀ-
Հայաստան և Լուսինե Խառատյան
Բնապահպանության և սոցիալական*

Աշխատանքային հանդիպման ընթացքում ներկայացվողին «Հազարամյակի մարտահրավերների» հիմնադրամ – Հայաստան ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցությանն առնչվող հարցերը: Նկարագրվեց բնապահպանական և սոցիալական գնահատման գործընթացը, բնապահպանական և սոցիալական գնահատման իրականացման իրավական դաշտը՝ այդ թվում ՀՀ իրավական ակտերը, ՀՄԿ համապատասխան փաստաթղթերը և առնչվող միջազգային համաձայնագրերը: Ներկա գտնվողները ծանոթացան Շրջակա միջավայրի կառավարման պլանի կառուցվածքին, ՀՄՀ Հայաստանյան հայտի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը:

Հակիրճ ներկայացվեց Բնապահպանական և սոցիալական գնահատման և վերահսկողության խորհրդատուի հիմնական գործառնությունները, խորհրդատուի տեխնիկական առաջադրանքի հիմնական դրույթները և վերջինիս ընտրման գործընթացը: Վերջում քննարկվեց շահառուների դերը ՀՄՀ-Հայաստան ծրագրի բնապահպանական և սոցիալական առնչվող հարցերի և խնդիրների իրագրելման, ինչպես նաև գնահատման գործընթացում մասնակցության ապահովման գործում

Մասնակիցների հարցեր և մեկնաբանություններ.

- ՀՄՀ-Հայաստան ծրագրում ռիսկերի գնահատման և վերլուծության համակարգի առկայության հարցը.
- ՇՄԱԳ-ի համար, ՀՀ օրենսգրքով պատասխանատու կազմակերպության հստակեցման հարցը.
- կառավարման խորհուրդ ՇԽ-ի որպես բնապահպանական դիտորդի պատվիրակման հարցը:

9. Ֆինանսական հարցերի և իրավական հարցերի ներկայացում *Բաբկեն Մնացականյան, Ֆինանսական գծով դեկավար, ՀՄՀ-Հայաստան և Ռուզաննա Ղազարյան, Իրավախորհրդատու, ՀՄՀ-Հայաստան*

Բ. Մնացականյանը և Ռ. Ղազարյանը հակիրճ ներկայացրեցին ծրագրի ֆինանսական և իրավական ասպեկտները:

10. ՀՄՀ-Հայաստան ծրագրի Դավիթ Ղաթաղյան, Կայքավար ինտերնետային կայքի ներկայացում

Դ. Ղաթաղյանը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի ինտերնետային կայքի բաղադրիչները և ակնկալվող փոփոխությունները:

Նշվեց, որ ՀՄՀ-Հայաստան Ինտերնետային կայքի կառուցվածքը վերանայվելու է, վերականգնվելու է ֆորումը, հրապարակումների հղումները եւ առկա ինֆորմացիան:

Քննարկվեց Ինտերկետային կայքիում մրցութային գաղտնիք պարունակող ինֆորմացիայի, ինչպես նաև մրցութային հանձնաժողովների անդամների կազմը չհրապարակելու առաջարկությունը:

Երկրորդ օրվա աշխատանքների ամփոփում

ԹԵՄԱ 1

ՀՄՀ Հայաստանյան ծրագրի Շահառուների խորհրդի և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի միջև փոխհարաբերությունների կառուցվածքը

Օրակարգի առաջին թեմայի վերաբերյալ ելույթ ունեցավ Արա Հովսեփյանը: Նա նշեց, որ ՀՄՀ Հայաստանյան ծրագրի Շահառուների խորհրդի և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի միջև փոխհարաբերությունների պետք է ունենան պարբերական բնույթ, լինեն համակարգված և միասնական աշխատանքներ իրականացնելու պատրաստակամությամբ:

Պարզաբանվեց ՇԽ օգնականի դերը Շահառուների խորհրդի և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի համագործակցության գործում և ընդհանուր փաստաթղթերի մեկ համակարգի ստեղծման և պահպանման անհրաժեշտության կարևորության հարցը:

Թեմայի քննարկում.

Հիմնական հարցադրումներ.

1. Շահառուների խորհրդի անդամների և վերջիններիս ներկայացրած կազմակերպությունների մասնագիտական կարողությունների ավելի արդյունավետ ինտեգրում/կիրառում ծրագրի իրականացման ընթացքում, շահառուների ներգրավվում գրասենյակի աշխատանքային քննարկումներում.
2. Առանձին ֆորմա/ոչ ֆորմալ կանոնակարգի հաստատում՝ Շահառուների խորհրդի և ՊՈԱԿ-ի միմյանց հետ աշխատելու եզրերը սահմանելու և որոշակի սկզբունքներ/ ժանկետներ ամրագրելու համար.
3. Տեղեկատվական հոսքի կազմակերպման համակարգում ՊՈԱԿ-ի, ՇԽ և բոլոր շահառուների միջև.
4. ՇԽ-ի աջակցությունը ՊՈԱԿ-ին տեղական մակարդակում շահառուների ակտիվացման, շահառուների տեղական խմբերի ձևավորման, շահառուների ներգրավվման գործում:

Առաջարկվող գործողություններ.

1. ՊՈԱԿ-ի աջակցությունը (մասնագիտական, ֆինանսական, տեխնիկական) ՇԽ-ին այլընտրանքային, անկախ մոնիտորինգների կազմակերպման գործում.
2. Ծրագրի շրջանակում խնդիրների բանկի ստեղծում, առաջնահերթությունների գատում, որտեղ կառանձնաձևն այն կետերը, որոնք առաջնային են և այդ շրջանակներում կարելի է տալ առաջարկություններ, գտնել լուծումներ.

3. Առաջարկել կառավարման խորհրդի բոլոր անդամներին ստորագրել մրցութային գաղտնիության և անկողմնակալության հայտարարագիր.
4. Կամավորության սկզբունքներով ՇԽ անդամներից և ՊՈԱԿ-ի անդամներից բաղկացած աշխատանքային խմբերի ստեղծում ենթաձրագրերի/խնդիրների/ուրտների/աշխատանքների շուրջ.
5. ՇԽ-ի կողմից բոլոր գրավոր փաստաթղթերը ներկայացնել ՇԽ օգնականի միջոցով/.
6. Ծրագրին առնչվող ՇԽ-ի բոլոր փաստաթղթերի արխիվացումը կազմակերպել ՀՄՀ-Հայաստան գրասենյակի համապատասխան բաժնում.
7. Ծրագրի մեջ ընդգրկված բաղադրիչներին, մասնավորապես Ջրից դեպի շուկա բաղադրիչին, հատկացել առանձին քննարկումներ, համապատասխան փորձագետների մասնակցությամբ.
8. ՀՄՀ-Հայաստան ծրագրի մասնագետները կազմակերպեն տեղային ներկայացումներ և քննարկումներ՝ ծրագրի մանրամասները ավելի հասանելի դարձնելու լայն հասարակության համար:

ԹԵՄԱ 2

ՀՄՀ Հայաստանյան ծրագրի Շահառուների խորհրդի փոխհարաբերությունները ՋԼՄ-երի հետ

Թեմայի հիմնախնդիրները ներկայացնելու համար հանդես եկավ Շահառուների խորհրդի անդամ Լևոն Բարսեղյանը: Նա ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի լուսաբանման գործընթացները ՀՀ տպագիր մամուլում:

Առաջադրվեցին մի շարք մեխանիզմներ, որոնց միջոցով կարելի է խուսափել թյուր ինֆորմացիայի տարածումից:

Թեմայի քննարկում.

Հիմնական հարցադրումներ

1. Ոչ ճիշտ տեղեկատվությունը մամուլում, իրազեկման գործում առկա խնդիրներ, դրանց արձագանքելու ռազմավարության անհրաժեշտություն.
2. ՇԽ-ի/ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված հիմնավոր տեղեկատվության պակաս.
3. ՇԽ անդամի և ողջ խորհրդի կողմից տեղեկատվություն/կարծիքներ տրամադրելու մոտեցումներ.

Ա Պաշտոնական տեղեկատվության տրամադրման դեպքում՝ ՇԽ անդամի լիազորում.

Ա Մասնավոր կարծիք արտահայտելու ազատություն:

Առաջարկվող գործողություններ

1. ՇԽ ներկայացուցչի /Լ.Բարսեղյան/, ինչպես նաև ՊՈԱԿ-ի ԳԳՏ-ի, ՄԲ-ի և ՇԽ օգնականի ներգրավմամբ արձագանքման/իրազեկման հայեցակարգի/մեխանիզմների մշակում. ՇԽ-ի առաջիկա նիստում հայեցակարգի քննարկում:

2. Տեղեկատվական/վերլուծական բնույթի նյութերի տրամադրում/քննարկումների կազմակերպում կենտրոնական, մարզային, մասնագիտական/ուլորտային ՉԼՄ-երի միջոցով /օրինակ՝ Ագրոլրատում մեկ էջ հատկացնելով/.

3. ՀՄՀ-Հայաստանի մամլո քարտուղարի ներգրավումը թվարկված խնդիրներին արձագանքելու գործում, ինչպես նաև իրազեկման ակտիվ քաղաքականություն վարելու մոտեցումների ձևակերպման հարցում.

i. Օժանդակություն ՇԽ-ի նիստերի լուսաբանման, ՉԼՄ-երի հետ հարաբերությունների հարցում.

ii. Մամլո ասուլիսներ.

iii. ՄԲ-ի գործունեությունը ՇԽ-ի և ՀՄՀ-Հայաստանի շրջանակներում, ՄԲ-ի և ՇԽ-ի օգնականի պարտականությունների տարանջատում.

iv. ՄԲ-ի կողմից մամլո տեսության նյութերի պատրաստում.

v. Էլեկտրոնային փոստի միջոցով քվեարկությանը մասնակցած ՀԿ-երին տեղեկատվության տրամադրում:

4. ՀՄՀ-Հայաստանի կողմից ծրագրային նախնական մամլո հաղորդագրության տարածման գործընթացի մեխանիզմների վերահսկում:

Մասնավոր բնույթի առաջարկներ.

Ա ՇԽ նիստերի լուսաբանում ՉԼՄ-երի կողմից.

Ա Մարզային ՉԼՄ-երի օգտագործում իրազեկման գործում.

Ա ՉԼՄ-երի և համացանցի միջոցով նոր տեղեկատվության տրամադրում.

Ա Թյուր տեղեկատվության կանխարգելման մեխանիզմների իմացություն և կիրառում, օրինակ՝ պրոֆեսիոնալ լրագրողների օգտագործում հիմնավոր տեղեկատվություն տրամադրելու նպատակով.

Ա Խառը քննարկումներ ոլորտային, շահագրգիռ այլ խմբերի հետ՝ խուսափելու համար տեղեկատվության պակասի արդյունք հանդիսացող խեղաթյուրված լրատվությունից.

Ա Ծրագրի կողմից պատրաստվող տեղեկատվական նյութերի օգտագործում/տարածում Շխ-ի կողմից.

Ա Տեսաֆիլմի նկարահանում.

Ա Գովազդների տեղադրման մեխանիզմներն օգտագործելու դեպքում բաց մրցույթների կիրառում.

Ա Համայնքների հետ հետադարձ կապ ապահովող մեխանիզմների օգտագործում:

ԹԵՄԱ 3

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի դերը ազատ և արդար ընտրությունների խթանման գործում

Ա. Ռասինը համառոտ ներկայացրեց ՀՀ ընտրությունների և ՀՄՀ-Հայաստան ծրագրի փոխադարձ կապը: Նա նշեց, որ ընտրությունների կեղծիքները կարող են ծրագրի դադարեցման պատճառ հանդիսանալ: Ներկայացվեցին այն քայլերը, որոնց միջոցով կարելի է խուսափել նման զարգացումներից: Մասնավորապես ընդգծվեց իրազեկման աշխատանքներում ծրագրի իրական արդյունքների և Հայաստանի հետագա զարգացման մեջ դրա ունեցած ներդրման կարևորության լուսաբանումը: ՇԽ որոշ անդամներ արդեն քայլեր են նախաձեռնել այս ուղղությամբ: Պրն. Ռասինը կոչ արեց ՇԽ բոլոր անդամներին ակտիվորեն ներգրավվել ծրագրի մասին ինֆորմացիայի տարածման գործընթացին, որն էլ կխթանի ազատ և արդար ընտրությունների անցկացումը: Միևնույն ժամանակ կարևորվեց ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ նկատված բոլոր դրական տեղաշարժերի մասին ԱՄՆ կառավարության ներկայացուցիչներին տեղյակ պահելու:

Թեմայի քննարկում.

Հիմնական հարցադրումներ.

- Մասնակիցները մտահոգություն հայտնեցին այն կապակցությամբ, որ ԱՄՆ կառավարության տրամադրության տակ կարող են լինել հնարավոր կեղծիքների մասին վկայող փաստեր, և որ այդ դեպքում անհրաժեշտ է նման փաստերը տրամադրել ծրագրի շահառուներին՝ համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով:

- Մասնակիցները քննարկեցին այն հարցը, թե ինչպիսի տեղեկատվությունը կարող է բարենպաստ ձևով ընկալվել ազատ և արդար ընտրություններ անցկացնելու Հայաստանի պատրաստակամությունը հավաստելու տեսանկյունից և ինչպես ՇԽ-ն կարող է ներգրավվել նման տեղեկատվության տրամադրմանը:

- Մասնակիցները անհանգստություն հայտնեցին այն մասին, որ ՀՄԿ ֆինանսավորմանն առնչվող քաղաքական նախապայմանները կարող են վտանգել ծրագրի իրականացումը, որի արդյունքում կտուժեն մեծաթիվ շահառուներ:

- Քննարկվեց այն հարցը, թե ինչ ժամկետներում կարող են ձեռնարկվել «վատ» ընտրություններին որպես արձագանք նախատեսվող քայլերը, այն է՝ արդյոք ծրագիրը կդադարեցվի անմիջապես թե ԱՄՆ կառավարությունը կսպասի մինչև նոյեմբեր, երբ հրապարկվում են բոլոր ցուցանիշների գծով ամփոփ տվյալները:

Առաջարկվող գործողություններ.

- ներգրավել ՇԽ ջանքերը ազատ և արդար ընտրությունների խրախուսման գործնառնացում.
- պարբերաբար կազմակերպել ընտրությունների վերաբերյալ առանձին քննարկումներ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և փաստել առկա իրավիճակը.
- պարբերաբար կազմակերպել տեղեկատվության/առկա խնդիրների շուրջ կարծիքների փոխանակում ՇԽ/ՀՄԿ/ՀՄՀ-Հայաստան գրասենյակի միջև:

ԹԵՄԱ 4

**ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի հաշվետվողականությունը
հասարակությանը**

Ելույթով հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ծրագրի ԳԳՏ Արա Հովսեփյանը և ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան գրասենյակի մոտեցումները հարցի վերաբերյալ:

Նա շեշտեց ՇԽ-ի պարբերական հաշվետվությունների կազմակերպման անհրաժեշտության հարցը, որը նախատեսում է գրավոր/բանավոր հաշվետվություններ ՇԽ-ի ձևավորմանը և ընտրությանը մասնակցած ՀՀ ՀԿ-ներին, ինչպես նաև լայն հասարակությանը իրազեկման և տեղեկացման գործընթացների կազմակերպում:

Թեմայի քննարկում

Հիմնական հարցադրումներ.

- սահմանել ՇԽ հաշվետվողականության մեխանիզմները/ձևերը.
- հասարակությանը իրազեկելը սահմանել որպես ՇԽ-ի հաշվետվողականության միջոց.

- ՇԽ հաշվետվողականության մեխանիզմները սահմանելիս հաշվի առնել ընտրող ՀԿ-ի դիրքորոշումները:

Առաջարկվող գործողություններ.

- մշակել ՇԽ-ի և ընտրող ՀԿ-ների փոխհարաբերությունների կարգը.
- վերանայել ՇԽ-ի Կանոնակարգը և անել լրացումներ՝ սահմանելով ՇԽ-ի պարտականությունները, ՇԽ-ի և ՊՈԱԿ-ի փոխհարաբերությունների հարցը.
- տպագրել ՇԽ պարբերական /պետք է որոշվի հաճախությունը/ հաշվետվություններ.
- ընդունել հաշվետվություն (ուղղակի/անուղղակի) տրամադրելու սկզբունքները և լուծել հաշվետվության տեխնիկական հարցերը.
- կազմակերպել հանդիպում բոլոր այն ՀԿ-ների մասնակցությամբ, որոնք առաջադրել են ՇԽ անդամներ.
- Հաշվետվությունների բովանդակության սահմանում.
- պարբերաբար կազմակերպել ՇԽ-ի հանդիպումներ հասարակության ներկայացուցիչների հետ՝ դրանք դիտելով որպես հաշվետվողականության միջոց: